

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«7» փետրվարի 2022 թ. թիվ 165 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԱՏՎԱԿՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ
ՇՆՈՐՀՄԱՆ

Երևան -2022

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կարգն ու պայմանները:

2. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվավոր կոչումները և պարգևները շնորհվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով կամ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

3. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում սահմանվում են հետևյալ պատվավոր կոչումները և պարգևները, որոնք տրվում են սահմանված պահանջները բավարարող անձանց.

3.1. **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ոսկե մեդալ»-ը** ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի նախաձեռնությամբ կամ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով տրվում է.

ա) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատողներին՝ բեղմնավոր և արգասաբեր գործունեություն ծավալելու համար, կրթության զարգացման գործում նշանակալի ավանդի, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնադրման հորեյանի, ինչպես նաև աշխատողի ծննդյան հորեյանի կապակցությամբ,

բ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բարերարներին,

գ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ նշանավոր հյուրերին,

դ) ակադեմիական համակարգի հաստատություններին կամ դրանց աշխատողներին՝ գիտության և բարձրագույն կրթության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար, ինչպես նաև ծննդյան հորեյանի կապակցությամբ,

ե) միջազգային հեղինակավոր (վարկանիշային) մրցույթներում և առաջնություններում 1-ին տեղ զբաղեցրած ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողներին:

3.2. **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արծաթե մեդալ»-ը** ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի նախաձեռնությամբ կամ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով տրվում է.

ա) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատողներին՝ անբասիր աշխատանքի, երիտասարդ

մասնագետների պատրաստման գործում ներդրած ավանդի համար, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնադրման հոբելյանի, ինչպես նաև աշխատողի ծննդյան հոբելյանի կապակցությամբ,

- բ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բարեգործներին,
- գ) ակնառու հաջողությունների հասած ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողներին,
- դ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի որոշմամբ այլ անձանց:

3.3. **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բրոնզե մեդալ»-ը** ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի նախաձեռնությամբ կամ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների ներկայացմամբ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով տրվում է.

ա) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատողներին՝ աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հիմնադրման հոբելյանի, ինչպես նաև աշխատողի ծննդյան հոբելյանի կապակցությամբ,

- բ) «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լավագույն ուսանող» մրցանակաբաշխության հաղթողներին,
- գ) նշանակալի հաջողությունների հասած ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողներին,
- դ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի որոշմամբ այլ անձանց:

3.4. **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվավոր պրոֆեսոր»** պատվավոր կոչումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ տրվում է.

ա) արտասահմանյան գիտակրթական կենտրոնների պրոֆեսորներին՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի հետ երկարատև և բեղմնավոր համագործակցության համար,

բ) ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում առնվազն 50 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող, առնվազն հինգ գիտությունների թեկնածու պատրաստած աշխատողներին՝ աշխատանքային պարտականությունները վայր դնելու և աշխատանքից ազատվելու կապակցությամբ:

3.5. «**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվավոր դոկտոր**» պատվավոր կոչումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ տրվում է.

ա) պետական, քաղաքական, հասարակական գործիչներին, ականավոր գիտնականներին և մշակութային գործիչներին (այդ թվում՝ օտարերկրացի),

բ) արտասահմանյան գիտակրթական կենտրոնների գիտնականներին՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի հետ երկարատև համագործակցության համար:

3.6. «**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնի պատվավոր վարիչ**» պատվավոր կոչումը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ տրվում է առնվազն 20 տարի ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ամբիոնի վարիչ աշխատած պրոֆեսորին՝ ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ, եթե պատրաստել է առնվազն հինգ գիտությունների թեկնածու կամ դոկտոր:

4. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվավոր կոչումներ և պարգևներ ստացած անձանց հաշվառումն իրականացնում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական քարտուղարը:

5. Սույն կանոնակարգում լրացումները և փոփոխությունները կատարվում են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ: